## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն   N 1/1Ա

,,17,,նոյեմբերի 2021 թվականի    գ. Տեղ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝**

**Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը**

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝**

**Տեղ համայնքի նորընտիր ավագանու թվով 14 (տասնչորս) անդամներ՝**

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Սարգսյան Մասիս Պարոնիկի
11. Հովսեփյան Արգամ Ռադյայի
12. Բաղդասարյան Կարեն Լորիկի
13. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
14. Զեյնալյան Մասիս Արամայիսի

**Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 1 (մեկ) անդամ՝ Ասպետ Գալստյանը:**
որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 14 (տասնչորս)** անդամները:

**ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝**
համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Էյլազյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունի Պողոսյանը:

**ԼՍԵՑԻՆ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 17-ի առաջին նստաշրջանի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին,**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Տեղ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 2-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու ֆինանսավարկային, իրավական և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին,**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին,**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին,**
6. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու ֆինանսավարկային, իրավական և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին,**
7. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին,**
8. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին,**
9. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 42-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,**
10. **Արամ Միրզոյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:**